ղէդուխ[1] լերէամբ[2], մինչեւ ցնոյն Այծպտկունս, որ բաժանէ ընդ Կարին եւ ընդ նա, յորում գտանի սալակ եւ ձիղկ եւ նաւթ սեւ եւ սպիտակ. յորոյ յելից բ[ղ]խէ[3] Մուրց գետ, գնալով ընդ հիւսի՛սի[4]՝ ի-ջանէ ի Բասէն[5] գաւառ եւ խառնի յերասխ եւ գե-տ[ա]ցուցանէ[6] զնա: 135 *Յելի[ց][7] Մարդաղո[յ] է Դաստովոր[8] գաւառ, եւ ն[որ]ա[9] յելից՝ Տ[ո]ւարա-ծատափ[10], [ե]ւ[11] նորա յելից՝ Դալառ. եւ ի հարա-ւո[յ] նոցա՝ Հարք եւ Վա[րա]ժնունիք[12], մինչեւ ցԱ-րածանի, որ իջանէ [յ]Ապահունեաց[13]:* 136 *Որոց ի հարաւո[յ] Սարակ՝ ի Բզ[ն]ունեաց[14] գաւառի, ի Նեխ[15] Մասեաց* [25ա] *սկսանելով՝ պատէ զարեւ-մտեա[յ] եզր հոմանուն ծովուն՝ մինչեւ ցբերդն Բա-ղէշ եւ անդր եւս ի հարաւ կոյս՝ ցերէվարք[16] գա-ւառի սահման:* 137 *Եւ Բզնունիք ունի յիւր հոմա-նուն ծովէն կղզիս երիս[17]՝ զԱրձկէոյն, զՅիպա-նին[18] եւ զՏոքեանն:* 138 *Որո[յ] ըստ հարաւո[յ], ի մէջ լերինն Տաւրոսի[19] եւ ծովու՝ գաւառ երէվարք, յորում՝ լիճ ինչ, որ կոչի եղիգի յու[ղ]խից[20], զի ի վարելն յակաւսն ջուր ըմպէ եզն, եւ սերման ելն[21] քառասուն[22] աւրն հասանէ եւ բերէ ընդ միո[յ] յի-սուն[23]:* 139 *Եւ ծովն Բզնունեաց յերկայնն հա-րիւր[24] մղոն է, եւ լայնն՝ վաթսուն[25]:* 140 *Որո[յ] ըստ հիւսիսո[յ]՝ Աղիովիտ[26] գաւառ, եւ զմտիւք նորա [Ա]պահունիք[27], [որոյ ըստ հարաւոյ՝ Կորի գաւառ, եւ ըստ հիւսիսոյ՝ Խորխոռունիք][28], ընդ որոյ մէջն անցանէ Արածանի:* 141 *Յեզրն Բզնունեաց գտանի պտակ եւ կաստաննոն, որ է մաշկամիրգ[29], եւ մեղր՝ անոյշ քան զամենայն երկրի, եւ երկաթ [եւ սպիտակ նաւթ][30]:*

---

1 *S* Մեղեդուխ *փխ* Մեղէդուխ *(V. ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Մեղեդու[ղ]խ*)*

2 *V* լերեամբ *փխ* լերամբ *(վեր. Սուքրեանի, հմմտ. նախորդիւ, 2 ծնթ. վերեւ)*

3 *VS* բխէ *փխ* բ[ղ]խէ *(վեր. Երեմեանի՝ ըստ այլոց. տե՛ս, օր.՝ նախ. Դ.23, Ե.78, 119, 133, 206 եւն)*

4 *V* հիւսիւսի *փխ* հիւսիսի *(վեր. Սուքրեանի)*

5 *S* Բասեն *փխ* Բասէն *(V)*

6 *V* գետցուցանէ *փխ* գետացուցանէ *(վեր. Սուքրեանի. հմմտ. ստորեւ, նախ. Ե.178)*

7 *V* յելի *փխ* Յելից *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

8 *VS* Գաստովոր *փխ* Դաստովոր *(վեր., տե՛ս բոլորագիր* **Դ → Գ**. *համառօտում՝* Դաստարաւորք *եւ* Դասնաւորք *է, իսկ Սուքրեանի ծանօթագրումն է՝* «Ըստ այլ Օր. *Դասնաւորք». բոլորը համադրելով՝ գուցէ, վերականգնելի է* Դաստ[ն]աւոր[ք]*)*

9 *V* նա *փխ* նորա *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

10 *V* Տւարաձատափ *փխ* Տուարաձատափ *(վեր. Սուքրեանի)*

11 *V* ւ *փխ* [ե]ւ *(վեր.)* / *S չիք* [ե]ւ *(V)*

12 *V* Վաձնունիք, *S* Վաժնունիք *փխ* Վա[րա]ժնունիք *(վեր.՝ ըստ համառօտի. տե՛ս* Վա – րա... *եւ բոլորագիր* **ժ → ձ**. *վերջինիս համար հմմտ. նաեւ* Վա[րա]ժնունիք ... ցԱրածանի. *Սուքրեանի ծնթանն է.* «*Վարաժնունիք* ըստ այլոց»*)*

13 *V* Ապահունեաց *փխ* յԱպահունեաց *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

14 *V* Բզուներաց *փխ* Բզնունեաց *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, հմմտ. 4 տող ներքեւ՝ յաջորդ նախ.)*

15 *Սուքրեանի ծնթ.-ը՝* «Այսպէս յՕր. Մասիքդ այդ Սիփան լեառն է, որոյ մակդիր մի թուի *Նեխդ*»

16 *VS* ցԵրէվարդ *փխ* ցԵրէվարք *(վեր.՝ ըստ յաջորդի, հմմտ. 4 տող ներքեւ՝ նախ. Ե.138. համառօտում՝* Երեւարք. *Սուքրեանի ծանօթագրումն է.* «*Երեւարք* որպէս ի ստորեւդ եւ ըստ այլոց»*)*

17 *V* ՟գ, *S* երեք *փխ* երիս *(վեր.՝ ըստ այլոց)*

18 *S* զՕիպանին *փխ* զՅիպանին *(V)*

19 *VS* Տորոսի *փխ* Տաւրոսի *(վեր.՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ե.39, 53, 59, 150 եւ բանաւոր* **ԱԻ/Օ → Ո***)*

20 *VS* յուխից *փխ* յուղխից *(վեր. Երեմեանի)*

21 *S* սերմանեալն *փխ* սերման ելն *(V)*

22 *V* ՟ա

23 *V* ՟ծ

24 *V* ՟ճ

25 *V* ՟կ

26 *V* Աղիտվիտ, *S* Աղիտովիտ *փխ* Աղիովիտ *(վեր., տե՛ս բոլորագիր* **իո → իտո***)*

27 *V* ՟ր պահունիք *փխ* նորա [Ա]պահունիք *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդի. տե՛ս նախ. Ե.135)*

28 *VS չիք* որոյ ըստ ... Խորխոռունիք *(2 տող) (պայմանական վեր.՝ ըստ համառօտի, ուր լոկ* «Աղիովիտ, Ապահունիք, Կորի (*DPv* Կոր), Խորխոռունիք (*AE* Խորխորունիք)» *թուարկումն է. տե՛ս* Ա-պահ**ունիք** ... Խորխոռ**ունիք**. *ոչ մեծ Կորի գաւառն, ըստ Թովմա Մեծոփեցու՝ ընկած էր Սիփանի հիւսիսային լանջերին, իսկ Խորխոռունիքի իրական տեղորոշումն Ապահունիքից հիւսիս է՝ Արածանիի մէջ ձախից թափուող* Մալխաս*-ի հովտում, հմմտ.* Խորխոռունի = **Մաղխազ**ունի*)*

29 *V* մաշտամիրք *փխ* մաշկամիրգ *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի, որի թուարկումն է.* «գազպեն, եւ մեղր եւ մաշկամիրգ եւ պիստակ». *տե՛ս նաեւ բարբառային* **Գ → Ք**. *Սուքրեանի ծանօթագրումն է.* «Յօր. *Մաշտամիրք»*)

30 *VS չիք* եւ սպիտակ նաւթ *(վեր.՝ ըստ համառօտի, որտեղ* «երկաթ եւ նաւթ» *է կամ* «սպիտակ նաւթ եւ երկաթ». *տե՛ս* երկ**աթ** ... **նաւթ***)*